ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ. «ԻՍԼԱՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

«Իսլամը Եվրոպայում» խորագրով հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ սույն թվականի սեպտեմբերի 6-ից 10-ը Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում:

Նիստը կազմակերպելու համար կազմված հանձնաժողովը բաղկացած էր Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի և Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսական Ժողովի անդամներից, որի կազմում ընդգրկվել էր 17 հոգի, Եվրոպական գրեթե բոլոր Եկեղեցիներից՝ Կաթոլիկ, Ուղղափառ, Հայ Առաքելական, Անգլիկան և Բողոքական:

Խորհրդաժողովի օրակարգում կային երկու կարևոր հարցեր.

Ա. Պատրաստել և խմբագրել նյութեր Եկեղեցիների համար՝ Իսլամի հետ հարաբերությունների հարցի շուրջ, ինչպիսիք են երիտասարդների դաստիարակությունը, խառն ամուսնությունների դեպքում հոգեբանական միջամտությունների խնդիրները.

Բ. Բոսնիա-Հերցեգովինայի մայրաքաղաք Սարաևոյում 2001 թվականի սեպտեմբերին կազմակերպել «Քրիստոնյա-Իսլամ» խորագրով երկխոսություն:

Որպես հանձնաժողովի անդամ և Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչ, նիստին մասնակցում էր Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը:

Սրբազան Հայրը, մահմեդականների մեջ երկար տարիներ ապրած լինելու փորձից ելնելով, իր ակտիվ մասնակցությունը բերեց նիստին և նպաստեց փաստաթղթերի սրբագրմանը և բարեփոխմանը:

Ժողովի ընթացքում Սրբազան Հայրը հանդիպումներ ունեցավ Ալբանիայի և Տիրանայի Ուղղափառ Եկեղեցու պետ, Ամենապատիվ Անաստասիուս Արքեպիսկոպոսի հետ:

Նա հանդիպումներ ունեցավ նաև Ալբանիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ